ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍԿՍՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՎԱՐԴԱՆ
ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մի շարք փորձագետներ դեռ երկու տարի առաջ կանխատեսում էին, թե 2004 թվականը վճռական է լինելու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման տեսանկյունից: Հիմնավորումը հետեւյալն էր՝ 2003-ին եւ՝ Հայաստանում, եւ՝ Ադրբեջանում ամբողջ հինգ տարի ժամկետով իշխանություններ են ձեւավորվում, եւ այլեւս ոչինչ չի կարող խոչընդոտել բանակցությունների բնականոն ընթացքը: Իսկապես՝ բանակցային գործընթացը նախորդ մեկ-երկու տարվա ընթացքում գրեթե սառեցված վիճակում էր: Այսօր, երբ արդեն ետեւում են թե՝ Հայաստանի, թե՝ Ադրբեջանի ընտրությունները, հակամարտության կողմերն ու միջնորդները աշխուժորեն խոսում են բանակցությունների վերսկսման անհրաժեշտության մասին: Թեման առավել հրատապ է դառնում ԵԱՀԿ գործող նախագահ Յաապ դե Հոոպ Սխեֆերի՝ Երեւանում եւ Բաքվում արած այն հայտարարություններից հետո, որ Մինսկի խմբում մշակված են խնդրի կարգավորման նոր առաջարկներ: Սխեֆերը նաեւ ասաց, որ առաջարկներին ծանոթ չեն անգամ հակամարտության կողմ համարվող պետությունների ղեկավարները. նրանք պաշտոնապես կտեղեկացվեն եռանախագահողների կողմից:

Ահա այս կցկտուր տեղեկությունների համատեքստում վերսկսվել են նաեւ քննարկումներ, թե ի՞նչ եւ ի՞նչ տարբերակով կարող է կարգավորվել հիմնահարցը: Մեր դիտարկմամբ, սակայն, դեռ կան խնդրի լուծման լուրջ արգելքներ, կան մի շարք հարցեր, որոնց պատասխանը չի տրվել, կան նրբություններ, որ հստակեցման կարիք են զգում: Առաջին հարցը հետեւյալն է. բանակցություններում միջնորդի դերը ստանձնած կողմերն անկեղծորեն շահագրգռվա՞ծ են, արդյոք, խնդրի շուտափույթ կարգավորմամբ: Կան բազում հրապարակումներ, որոնց հեղինակները պնդում են, թե ո՛չ Ռուսաստանը, ո՛չ ԱՄՆ-ն նման շահագրգռություն չունեն: Ըստ այդ նյութերի՝ ՌԴ-ն գիտակցում է, որ ինքն այսօր բավարար ուժեղ չէ, եւ ռուսաստանանպաստ լուծման համար հարմար ժամանակների է հետաձգում լուծումը, իսկ ԱՄՆ-ին ձեռնտու է տարածաշրջանում հակամարտության գոյությունը, ինչը այդտեղ ներկա լինելու, միջամտելու առիթ է տալիս:

Միջնորդների անկեղծ չլինելու մեղադրանքը սոսկ վարկած է, որ ապացուցման կարիք է զգում: Եթե անգամ ենթադրենք, որ նրանք լրջորեն շահագրգիռ են հիմնահարցի օր առաջ կարգավորմամբ, միեւնույն է կա այլ լուրջ բարդություն: Խնդիրն այն է, որ հակամարտության կողմերը ցայսօր խոսում են տարբեր լեզուներով: Ավելին՝ միանգամայն այլ լեզվով են խոսում եւ միջնորդները: Մինչ օրս ճշտված չեն ելակետն ու չափման համակարգը: Շարունակ խոսվում է այն մասին, որ խնդիրը պետք է լուծվի փոխադարձ զիջումների ճանապարհով: Չի հստակեցվում, ցավոք, թե ի՞նչն իբրեւ հիմք ընդունելով է, որ կողմերը պետք է գնան զիջումների: Ադրբեջանական կողմի պատկերացմամբ հիմքը մինչ 1988թ. եղած վիճակն է: Հայերն այն կարծիքին են, որ 1994-ի մայիսից (հրադադարի կնքման պահից) իրողությունն այլ է՝ հայերը հաղթել են ազերիների կողմից պարտադրված պատերազմում, ազատագրել տարածքներ, որոնք այսօր տարածաշրջանի կայունությունը երաշխավորող հավասարակշռության բաղկացուցիչն են: Միջազգային հանրության համար ելակետը խաղաղությունն է, նրանք այն կարծիքին են, որ հենց խաղաղության պահպանման համար կողմերը պետք է զիջումներ անեն: Ի դեպ, եթե հայկական կողմը գոնե որոշակիորեն հստակեցրել է, թե խնդրի կարգավորման ի՞նչ սկզբունքներ են իր համար ընդունելի (Արցախն Ադրբեջանից ուղղաթիռ կախում չպետք է ունենա, պետք է ՀՀ-ի հետ ցամաքային կապ ունենա եւ տրվեն բնակչության անվտանգության երաշխիքներ), ապա Ադրբեջանի կողմից նման հստակեցումներ երբեք չեն լսվել. այնտեղից լսելի են բացառապես չհիմնավորված առավելագույն պահանջներ:

Խնդրի կարգավորման ճանապարհին կան այլ բարդություններ եւս: Այսպես՝ Հայաստանում շարունակում են պաշտոնավարել նույն նախագահն ու արտգործնախարարը, որոնց օրոք կայացել են երկկողմ բանավոր պայմանավորվածություններ, իսկ Ադրբեջանում այդ տեսանկյունից իրավիճակը միանշանակ չէ: Այդ երկրի նոր նախագահը նախորդի որդին է, բայց առայժմ հայտնի չէ, թե ինչ՞ թիմով է նա մտադիր աշխատել՝ մասնավորապես արտաքին քաղաքականության ոլորտում: Իլհամ Ալիեւի վերջին օրերի արտահայտություններն անգամ հիմք են տալիս որոշ տեսաբանների եզրակացնել, թե նա տեղյակ էլ չէ բանակցություններից, ձեռք բերված պայմանավորվածություններից: Պատահական չէր, որ ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանն առանց ավելորդ լավատեսության հայտարարեց, որ բանակցային գործընթացի հաջողությունը կախված է Ռոբերտ Քոչարյան-Հեյդար Ալիեւ պայմանավորվածությունների ոգու պահպանումից:

Խնդրի կարգավորման ճանապարհին անհրաժեշտ է ճշտել նաեւ բանակցությունների ծուաչափը, այն, թե ովքե՞ր պետք է հանդես գան իբրեւ հակամարտության կողմ՝ Հայաստանն ու Ադրբեջա՞նը, ԼՂՀ-ն եւ Ադրբեջա՞նը, թե՞ ՀՀ-ն, Ադրբեջանն ու ԼՂՀ-ն: Հիշենք, որ ըստ ԼՂՀ պաշտոնական դիրքորոշման, բանակցությունները տակավին չեն սկսվել: Այդ պետության իշխանությունները համարում են, որ քանի դեռ քննարկումներին պաշտոնապես չի մասնակցում ԼՂՀ ներկայացուցիչը, ընթանում է բանակցությունների նախապատրաստություն: Ռոբերտ Քոչարյանը եւս օրերս պնդեց, որ բանակցությունները պետք է վերսկսվեն Արցախի ներկայացուցչի մասնակցությամբ:

Կարգախոս

Եվ վերջապես, հիմնահարցի կարգավորման ճանապարհին առկա բարդություններից է այն, թե որքանով են հակամարտության կողմեր համարվող պետությունների ղեկավարներն իրավասու ներկայացնել իրենց իսկ ժողովուրդների դիրքորոշումը: Թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի նախագահի ընտրություններն անցել են բազում իրավախախտումներով: Նույնիսկ երկու երկրների մի շարք կուսակցություններ մտադիր են ստորագրել հայտարարություն՝ տեղեկացնելով միջազգային հանրությանը, որ իրենց իշխանությունները չեն կարող ազգի կարծիքը ներկայացնել:

Արցախյան հիմնախնդրի շուրջ ստեղծված իրավիճակը գնահատելով՝ մենք այն կարծիքին ենք, որ իրականում աղաղության մեծ համաձայնագրի կնքման պահը մոտ չէ: Դժվար թե նման համաձայնության հնարավոր լինի գալ առաջիկա մի քանի տարիների ընթացքում: